«Նոր ժամանակի կրթություն» ՀԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՌԻՍՈՒՅԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԹԵՄԱՆ՝ ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ՄԱՐԴԿՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ՀԻՄՆԱԽՆԴԻՐ, ԿՐԹՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԴՊՐՈՑՈՒՄ:

ԵՆԹԱԹԵՄԱ՝ Ի՞ՆՉ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ ԿԱՐԵԼԻ Է ԻՐԱԿՆԱՑՆԵԼ ԴՊՐՈՑՈՒՄ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՀԻՄՆԱԽՆԴՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՄԱՆ ՀԱՄԱՐ

ԱՌԱՐԿԱՆ՝ ԿԵՆՍԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ, ՔԻՄԻԱ

ՀԵՏԱԶՈՏՈՂ ՈՒՍՈՒՑԻՉ՝ ԴԱՎԹՅԱՆ ՌԻՄԱ

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ՝ ՄԱՍԻՍ ՔԱՂԱՔԻ Մ. ՄԱՇՏՈՑԻ ԱՆՎԱՆ ԹԻՎ 1 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ 3

ԳԼՈՒԽ 1. ԷԿՈԼՈԳԻԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՁԵՎԵՐԸ ՏԱՐՐԱԿԱՆ ԴՊՐՈՑՈՒՄ 5

1.1 Կրտսեր դպրոցականների էկոլոգիական կրթության բովանդակությունը, նպատակներն և խնդիրները 5

1.2 Կրտսեր դպրոցականների էկոլոգիական կրթության, դաստիարակության մեթոդները և տեխնոլոգիաները 9

1.3 Կրտսեր դպրոցականների էկոլոգիական կրթության և դաստիարակության միջոցներն ու ձևերը 12

ԳԼՈՒԽ 2 ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ 22

2.1 Հետազոտական աշխատանքի կազմակերպումը և ստացված արդյունքների վերլուծությունն ու ամփոփումը..... 22

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ 30

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ 31

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Թեմայի արդիականությունը: 21-րդ դարում մարդկությունը կանգնած է բավականին լուրջ էկոլոգիական աղետի առջև: Մարդկանց բացասական և անպատասխանատու ազդեցության և գործունեության հետևանքով կարող է խախտվել «մարդ–բնություն-հասարակություն» փոխգործակցության հավասարակշռությունը, իսկ այն վերականգնելու համար անհրաժեշտ կլինեն մարդկային մեծ ջանքերի գործադրում: Շրջակա միջավայրի վրա մարդու գործունեության բացասական հետևանքները վերանցնելու համար անհրաժեշտ է լուծել մի շարք խնդիրներ՝ որոնցում գերակա տեղ է զբաղեցնում անձի էկոլոգիական դաստիարակության և կրթության խնդիրը:

Ազգաբնակչության էկոլոգիական կրթության և դաստիարակության մասին ՀՀ օրենքը նշում է ՝ <<էկոլոգիական կրթության պարտադիր լինելը կրթական համակարգի բոլոր մակարդակներում, դրա շարունակականությունը և համալիր բնույթը>>.[15] Այս դրույթը փաստում է ազգաբնակչության էկոլոգիական կրթությունն շարունակական գործընթաց է և այն համարվում է առաջնահերթ և կարևոր խնդիր:

Հանրակրթական դպրոցը որպես անձի կրթության և դաստիարակության առաջնային և կարևորագույն օղակ գերակա խնդիր ունի ՝լուծել անձի համակողմանի և ներդաշնակ զարգացումը:

Էկոլոգիական դաստիարակության և կրթության հիմքը դրվում է դպրոցում :

Էկոլոգիական կրթությունը և դաստիարակությունը պետք է իրականացնել դաստիարակության մյուս ձևերին զուգընթաց՝ գեղագիտական, բարոյական, մշակութային, տնտեսագիտական և այլն:

Աճող սերնդի Էկոլոգիական դաստիարակությունը՝որպես կրթական համակարգի և մանկավարժական հետազոտությունների գերակա ուղղություն, ընդունված է 1977 թվականին Մոսկվայում կայացած մանկավարժների միջազգային համաժողովում[11, էջ 8]:

Դպրոցականների մոտ բնության նկատմամբ պատասխանատու և

հոգատար վերաբերմունք ձևավորվելու նպատակով, հատուկ ուշադրություն պետք է դարձնել սովորողների պրակտիկ գործունեությանը (շաբաթօրյակներ, արշավներ, ծառատունկ և այլն): Ունենալով բավականին տեսական գիտելիքներ էկոլոգիայից՝ սովորողները բնաճանաչողական և բնապահպանական աշխատանքների ընթացքում ձեռք են բերում էկոլոգիական կարողություններ և հմտություններ, որն էլ ակտիվացնում է նրանց ճանաչողական գործունեությունը:

Էկոլոգիական կրթության և դաստիարակության տարբեր միջոցների և ձևերի կիրառման արդյունքում իրականցվում են դպրոցականների կոլեկտիվում աշխատելու հմտությունները, հարստանում է սոցիալական փորձը, որի նպատակն է նախապատրաստել նրանց հասարակություն մեջ ակտիվ կյանքի, և անձնային որակների դրսևորմանը:

ՈՒստի հենց դպրոցում պետք է դրվի էկոլոգիական դաստիարակության հիմքը, որը հնարավորություն կտա երեխաներին ձեռք բերել գիտելիքներ և կարողություններ, ձևավորել հմտություններ և բացահայտել ունակություններ, դրսևորել բարոյական չափանիշներ և վարքագիծ՝ բնության հետ փոխներգործության ընթացքում:

Հետազոտության նպատակը՝ Դպրոցում էկոլոգիական կրթության բովանդակության ուսումնասիրությունն ու էկոլոգիական դաստիարակության իրականացման արդյունավետ ձևերի մշակումն է:

Հետազոտության խնդիրներն են՝

1. Վերլուծել հիմնախնդրի շուրջ առկա մանկավարժահոգեբանական գրականությունը:
2. Բացահայտել դպրոցականների էկոլոգիական կրթության և դաստիարակության առկա վիճակը:
3. Մշակել դպրոցականների էկոլոգիական կրթության և դաստիարակության արդյունավետ ձևեր:

:

ԳԼՈՒԽ 1.

ԷԿՈԼՈԳԻԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ և ՁԱԵՐԸ ԴՊՐՈՑՈՒՄ

1.1 Դպրոցականների էկոլոգիական կրթության բովանդակությունը, նպատակներն և խնդիրները

Մարդկային հասարակությունը իր զարգացման ներկա փուլում բախվել է էկոլոգիական գլոբալ խնդիրների հետ: 21 _րդ դարը կարող է իրավամբ համարվել էկոլոգիայի դար, էկոլոգիական կրթությունը և դաստիարակությունը վերջին տարիներին դարձել են ոչ թե ցանկալի, այլ անհրաժեշտ պայման: Էկոլոգիան հին հունարենից թարգմանաբար նշանակում է գիտություն տան մասին, առաջացել է հունական «oikos » (տուն, բնակարան, կացարան), «logos» (գիտություն, ուսմունք բուսական և կենդանական օրգանիզմների հետ միմյանց) և շրջապատող միջավայրի հետ նրանց ունեցած հարաբերությունների մասին: Էկոլոգիան որպես գիտություն ձևավորվել է 19-րդ դարի երկրորդ կեսին (1866թ) «Էկոլոգիա» հասկացությունը առաջ է քաշել գերմանացի գիտնական Էռնեստ Հեկկելը, «Օրգանիզմների համընդհանուր մորֆոլոգիա աշխատության մեջ», իսկ առաջին աշխատանքները էկոլոգիական հիմնախնդիրների մասին պատկանում է Չարլզ Դարվինին: Սկզբում էկոլոգիան բնորոշ էր որպես կենդանի օրգանիզմների միջավայրի և միմյանց հետ փոխհարաբերությունների գիտություն: Այժմ այս ուղղությունը կոչվում է կենսաբանական կամ դասական էկոլոգիա: Սակայն մեր դարում էկոլոգիան դուրս է եկել կենսաբանության շրջանակներից՝ ներառելով նաև հասարակական ոլորտը: Էկոլոգիան երկար ժամանակ մնաց զուտ կենսաբանական գիտություն, որը հետաքրքրում էր միայն գիտնականներին: Եվ միայն 21-րդ դարի կեսերին էկոլոգիան ընդգրկվել է հասարակական կյանքի բոլոր ոլորտները: Այն դարձել է գիտություն, որը պետք է օգնի մարդկանց գոյատևել, իրենց կենսապայմանների ընդունելի դարձնել գոյության համար:

Դպրոցը, որպես կրթական համակարգի կարևորագույն օղակ, կոչված է լուծելու դպրոցականների էկոլոգական դաստիարակությանխնդիրները, ուստի էկոլոգիական կրթությունը և դաստիարակությունը համարվում են դպրոցի ուսումնադաստիարակչական գործընթացի

գերակա ուղղություններից մեկը:

Էկոլոգիական դաստիարակությունը, որպես անձի ամբողջական դաստիարակության բաղադրամաս՝ իրականացվում է դաստիարակության մյուս ուղղությունների՝ գեղագիտական, բարոյական, աշխատանքային, քաղաքացիական, տնտեսագիտական, իրավական, ընտանեկան դաստիարակության հետ:

Դպրոցականների էկոլոգիական դաստիարակության իրականացման առաջնային և կարևորագույն գործոնը էկոլոգիական կրթությունն է, որը տրվում է ուսումնական առարկաների՝ «Ես և շրջակա աշխարհ», «մայրենի», «մաթեմատիկա», «կերպարվեստ», «երգ – երաժշտություն», «տեխնոլոգիա» և այլ առարկաների միջոցով: Բացի դպրոցից էկոլոգիական դաստիարակություն իրականացվում է բնության, շրջակա միջավայրի ուսումնասիրման բնապահպանական հատուկ խմբակներում:

Ա.Աջամօղլյանը նշում է. «Մարդը չի ծնվում բնության իմացության պատրաստ նրա նկատմամբ բնական հարաբերության գիտակցությամբ, մտածողությամբ, կուլտուրայով և պատասխանատվության զգացումով: Այս բոլոր գիտելիքները, կարողությունները և հմտությունները, արժեքային կողմնորոշումները նա ձեռք է բերում էկոլոգիական կրթության և դաստիարակության շնորհիվ» [1, էջ 5-6]:

Այսինքն Աջամօղլյանը, գտնում էր, որ մարդը չի ծնվում բնության , շրջակա միջավայրի մասին գիտելիքներով, նա գտնում էր, որ շրջակա միջավայրի մասին գիտելիքները, մարդ – բնություն փոխհարաբերությունները ձևավորվում է, էկոլոգիական կրթության և դաստիարակության միջոցով, որը շարունակական և անընդմեջ գործընթաց է:

Էկոլոգիական դաստիարակության և կրթության մեջ առանձնակի կարևորվում է բարոյական տեսանկյունը, որը իրենից ներկայացնում է պատշաճ վերաբերմունք բնության, շրջակա միջավայրի նկատմամբ:

Երեխաների էկոլոգիական կրթությունն իրականացվում է երեք փոխկապակցված գործընթացների՝ կրթության, դաստիարակության և զարգացման միջոցով, այն ուղղված է անձի բնապահպանական մշակույթի զարգացմանը, մարդկային փոխազդեցության և հոգևոր փորձի հարստացմանը՝ ապահովելով դրա գոյատևումը և զարգացումը [22, էջ 48-49]:

Դիտարկենք երեք փոխկապակցված գործընթացների էությունը:

1. **Էկոլոգիական կրթությունը ենթադրում է՝** փոխկապակցված բնական երևույթների, օրինաչափությունների, կենդանի ու անկենդան բնության միասնության, մարդու, հասարակության և բնության մասին ունեցած գիտելիքների ձևավորում. Էկոլոգիական հիմնախնդիրների լուծում, մտավոր, բնապահպանական, շրջակա միջավայրի գնահատման, բարելավման, կարողությունների և գործնական ունակությունների զարգացում, էկոլոգիական արժեքային կողմնորոշումների ձևավորում:

Այսինքն՝ էկոլոգիական կրթությունն ենթադրում է կոլոգիական գիտակցության ձևավորում:

2. **Էկոլոգիական դաստիարակությունը ենթադրում է՝** էկոլոգիական աշխարհայացքի, էկոլոգիապես արդյունավետ վարքի, գործունեության պահանջմունքի, սովորույթի, բնական և սոցիալ-մշակութային միջավայրի, կյանքի, առողջության նկատմամբ պատշաճ վերաբերմունքի էկոլոգիական խնդիրների և հարցերի մասին գեղագիտական, բարոյական, դատողություններ կատարելու կարողության ձևավորում, շրջակա միջավայրի պահպանության ակտիվ գործունեության ձգտում:

Այսինքն՝ մարդու մոտ բնության նկատմամբ պատշաճ վերաբերմունք կարելի է ձևավորել էկոլոգիական կրթության և դաստիարակության միջոցով:

3. **Էկոլոգիական զարգացումը** ենթադրում է բնաճանաչողական, բնապահպանական, բնական պաշարների խնայողական օգտագործման վերաբերյալ գիտելիքների, կարողությունների, արժեհամակարգի քանակական և

որակական դրական փոփոխություններ, որն արտահայտվում է, շրջակա միջավայրի պահպանման, գործնական աշխատանքներին անձամբ մասնակցելու ցանկությամբ:[11, էջ 31-33]

Դպրոցականների էկոլոգիական կրթության և դաստիարակության գործընթացը կապված է նրանց տարիքային և անհատական առանձնահատկությունների հետ:

Ա.Օ.Թոփուզյանն իր <<Հումանիստական դաստիրակություն>> աշխատությունում նշում է ՝ ուսումնադաստիարակչական գործընթացի գերագույն արժեը ու դեմքը երխան է:[13, էջ 122]

Ուստի կարևոր է ուսումնադաստիարակչական գործընթացը կազմակերպել այնպես, որ չվնասել երեխային:

Այսպիսով՝ էկոլոգիական դաստիարակությունն ուղղված է դպրոցականների մեջ բնության, շրջակա միջավայրի մասին հասկացությունների ձևավորմանը, գիտելիքների հարստացմանը, բնության հետ ներդաշնակվելու ձգտման որակների դաստիարակմանը, որն էլ իր հերթին հարստացնում և ապահովում է նրանց ընդհանուր դաստիարակության ողջ գործընթացը:

Այն պետք է իրականացնել սկսած վաղ մանկական տարիքից՝ ընտանիքում, նախակրթական հաստատություններում, հանրակրթական դպրոցներում և արտադպրոցական հաստատություններում, մանկական կրթական-ժամանցային կենտրոններում:

1.2. Էկոլոգիական դաստիարակության խնդիրները և նպատակները

Էկոլոգիական դաստիարակությունն անձի ձևավորման կարևորագույն բաղադրամասն է, որի հիման վրա անձը կրթվում և դաստիարակվում է շրջակա միջավայրի նկատմամբ ունեցած ճիշտ վերաբերմունքի պահանջներով:

Էկոկրթական խնդիրներին համալիր լուծում տալու նպատակով, նախկին խորհրդային պետություններից առաջինը Հայաստանն է ընդունել «Ազգաբնակչության էկոլոգիական կրթության և դաստիարակության մասին» ՀՀ օրենքը: 2009թ ՀՀ կառավարության թիվ 47 արձանագրային որոշմամբ հաստատվել է «Բնապահպանական կրթության, դաստիարակության և իրազեկման ամբողջական և միասնական ազգային համակարգի ստեղծման հայեցակարգը: Մեկ տարի անց հաստատվել է հայեցակարգից բխող միջոցառումների ծրագիր, որի շրջանակներում կրթության ոլորտի լիազոր մարմնի՝ կրթության և գիտության նախարարության հետ իրականացվել են մի շարք միջոցառումներ: ՀՀ կառավարության 2017թ գործունեության միջոցառումների ծրագրի և գերակա խնդիրների մեջ ՀՀ բնապահպանության նախարարության նախաձեռնությամբ ընդգրկվել է էկոլոգիական կրթության և դաստիարակության զարգացման ռազմավարության մշակման հարցը: ՀՀ օրենքը 2009թ նոյեմբերի 12-ին ՀՀ կառավարության արձանագրային որոշմամբ հավանության է արժանացել ՀՀ – ում բնապահպանական կրթության, դաստիարակության և իրազեկման ամբողջական և միասնական ազգային համակարգի ստեղծման հայեցակարգը»:

2009թ հունիսի 10-ին ընդունված «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածը հանրակրթության սկզբունքների թվում սահմանում է նաև աշակերտների մոտ բնապահպանական աշխարհայացքի ձևավորում:

ՀՀ կրթության և գիտության նախարարությունն աշակերտների շրջանում էկոլոգիական կրթության կազմակերպման և այդ բնագավառում նրանց գիտելիքների և իրազեկվածության բարձրացման նպատակով հանրակրթության ոլորտում իրականացվում է մի շարք ծրագրեր, որոնցից կարևոր է համարվում `

հանրակրթական տարրական դպրոցում էկոլոգիական կրթության և դաստիարակության կազմակերպումը,

Էկոլոգական դաստիարակությունն ունի փուլային բնույթ՝

- Էկոլոգիական պատկերների և հասկացությունների ձևավորում:
- Մարդակենտրոն էկոլոգիական գիտակցությունից անցումը էկոկենտրոն գիտակցության:
- Էկոլոգիական գործունեության իրականացում:
- Բնության մեջ և շրջապատում անվտանգ վարքգծի ձևավորում:
- Էկոլոգիական մշակույթի ձևավորում**:**

Ըստ Ի.Ս Սուրավեգինայի և Վ.Մ Սենկևինչի էկոլոգիական դաստիարակության համար պետք է որոշել երեք խնդիր՝

1. Կրտեսեր դպրոցականների գիտակցությանը հասցնել, որ բնության մեջ ամեն ինչ փոխկապակցված է:

2. Դպրոցականներին օգնել հասկանալու, թե ինչի համար մարդը պիտի իմանա, հասկանա բնության և մարդու կապը, այսինքն՝ իր գործունեության ընթացքում չխախտի դա, որովհետև այդ կապերի խախտումը կարող է առաջ բերել մարդու և բնության համար անդառնալի հետևանքներ:

3. Երեխաներին օգնել կազմակերպել իր վարքն բնության և շրջակա միջավայրի մեջ՝ իրենց ստացած գիտելիքների հիման վրա **[**21, էջ 127]:

Էկոլոգիական կրթության խնդիրներն են՝

- Դպրոցականների էկոլոգիական գիտակցության և կուլտուրայի ձևավորում:
- Բնության և հասարակության փոխազդեցության մասին եղած բնագիտական, աշխարհագիտական, հասարակական, տեխնիկական, բարոյահիրավական հասկացությունների յուրացում:
- Բնության հետ շփվելու պահանջմունքի ձևավորում և գեղագիտական պահանջմունքի բավարարում:
- Բնապահպանական, բնաճանաչողական ընդունակությունների զարգացում՝ պարտքի և պատասխանատվության, խղճի զգացմունքների ձևավորում:

- Դպրոցականների մոտ էկոլոգիական հարցերի վերաբերյալ անհրաժեշտ ունակությունների և հմտությունների մշակում և այլն:

Դպրոցականների էկոլոգիական դաստիարակության առաջին պայմանը ուսուցչի մեթոդական պատրաստվածությունն է: Ուսուցման գործընթացում սովորողների կողմից բնության մասին տեսական գիտելիքները յուրացնելը բավական չեն, այն պետք է համակցել գործնականի հետ՝ ակտիվ մասնակցություն ցուցաբերելով բնության պահպանմանը և բարեկարգմանը:

Դպրոցականների էկոլոգիական կրթության և դաստիարակության հիմնական նպատակը նրանց մոտ էկոլոգիական գիտակցություն ձևավորելն է, սովորողների անհատական և սոցիալական զարգացման համար անհրաժեշտ պայմանների ապահովումը, շրջակա միջավայրի վիճակի նկատմամբ անձնական պատասխանատվության զգացումի դաստիարակումը:

Էկոլոգիական դաստիարակության ռազմավարական նպատակը էկոլոգիապես կրթված ու դաստիարակված անձի ձևավորումն է, որն օժտված է էկոլոգիական գիտակցությամբ, էկոլոգիական մտածողությամբ և աշխարհայացքով, էկոլոգիական մշակույթով և վարքով, էկոլոգիական արժեքային կողմնորոշումների համակարգով և պատասխանատվության զգացումով: Էկոլոգիական կրթության նպատակն է «շրջակա միջավայրի նկատմամբ ձևավորել պատասխանատու վերաբերմունք, որը կառուցված է բնապահպանական իրազկության հիման վրա» [20, էջ 125]:

Ժամանակակից էկոլոգիան համարվում է կիրառական համալիր գիտություն: Էկոլոգիական դաստիարկությունը ենթադրում է էկոլոգիական գիտելիքների կուռ համակարգի յուրացում, էկոլոգիական արժեքների փոխանցում սովորողների էկոկոնկրետ գիտակցության և վարքագծի ձևավորում: Էկոլոգիական դաստիարակության հիմքում ընկած է էկոլոգիական հասկացությունների, գիտելքների, արժեքների, պրակտիկ փորձի յուրացումը: Էկոլոգիական կրթությունը որպես սովորողի էկոլոգիական դաստիարակության հիմնական միջոց, նպաստում է տարրական դպրոցում սովորող աշակերտի բնաճանաչողական ընդունակությունների զարգացմանը, բնության նկատմամբ վերաբերմունքի ձևավորմանը:

1.3. Դպրոցականների էկոլոգիական կրթության, դաստիարակության մեթոդները և տեխնոլոգիաները

Մեթոդը հունարեն մեթոդոս բառն է, նշանակում է ուղի, եղանակ, ճանապարհ: Փիլիսոփաները գտնում էին, որ մեթոդը նպատակին հասնելու եղանակն է, իսկ դիդակտները՝ մնում էին այն համոզմանը, որ մեթոդը գործունեության եղանակ է: Մեթոդը ուսուցչի և աշակերտի գործունեության եղանակն է, նպատակին հասնելու ուղին: Մեթոդը մի դեպքում (օր. պատմելու) աշակերտին օգնում է ըմբռնել, իմաստավորել, համակարգել, հասկանալ, ուսուցչի հաղորդած գիտելիքը, մյուս կողմից՝ (զրույցի մեթոդը) խթանում է աշակերտի մտածողությունը կամ ստեղծագործական գործունեությունը (հետազոտական մեթոդ): Էկոլոգիական կրթության և դաստիարակության արդյունավետ կազմակերպման համար առավել արդյունավետ և կիրառական են հետևյալ մեթոդները՝ զրույց, բանավեճ, պատմում, ինտերակտիվ քննարկումներ, ինքնուրույն աշխատանքներ, էկոլոգիական ուղղվածության առաջադրանքներ, էկոլոգիական իրավիճակների մոդելավորումներ, դերային խաղեր, ուսումնահետազոտական նախագծեր:

Գործնականորեն օգտակար, արդյունավետ են ցուցադրական մեթոդները, ինչպես նաև վեբ տեխնոլոգիաների նպատակային կիրառումը:

Էկոլոգիական դաստիարակության առավել արդյունավետ մեթոդ է բանավեճը: Բանավեճի թեմայի ընտրության ժամանակ հաշվի է առնվում կրտսեր դպրոցականի էկոլոգիական գիտելիքների յուրացվածության մակարդակը, ակտիվությունը, դրդապատճառների ձևավորվածությունը: Բանավեճի հիմնական նպատակը նպասել սովորողների ինքնուրույնության, ճանաչողական հետաքրքրությունների, և էկոլոգիապես անվտանգ պրակտիկ գործունեության խթանմանը:

Էկոլոգիական կրթության և դաստիարակության արդյունավետ կազմակերպելու և իրականացնելու համար էական կարևորություն ունեն մեթոդաբանական հետևյալ պահանջները.

- Ուսումնական գործունեութան իրականացման մեջ առանձնացնել գլխավոր օղակը:
- Ընդհանրացնել այդ գործընթացի խնդիրներն ու բովանդակությունը, սպասվող արդյունքները:

Դպրոցականների էկոլոգիական կրթության և դաստիարակության ընթացքում կիրառվող մեթոդների հիմնական նպատակն է սովորողներին սկզբնական պատկերացումներ տալ աշխարհի ամբողջական գիտական պատկերների մասին, ցույց տալ մարդու կենսագործունեության անմիջական կապը շրջակա միջավայրի հետ, զարգացնել շրջապատող աշխարհը հուզականորեն ընկալելու կարողությունը, ձևավորել էկոլոգիական մշակույթը:

Պատահական չէ, որ մեծ մանկավարժ Վ.Ա.Սուխոմլինսկին նշում է. «Յուրաքանչյուր մարդ մանուկ հասակում պետք է անցնի հուզական դպրոց՝ բարի զգացմունքների դաստիարակության դպրոց՝ ծնված շրջապատող աշխարհի գեղեցկության համար կատարած աշխատանքում, հոգատարության անհանգստության մեջ» [14, էջ 11]:

Տարատեսակ մեթոդների կիրառումը էկոլոգիական դաստիարակության և կրթության գործընթացում կարող է տեսանելի արդյունք տալ եթե ապահովեն հետևյալ պահանջները՝

- դպրոցականների էկոլոգիական գործունեության գնահատման օբյեկտիվությունը,
- համակարգվածությունը,
- դաստիարակչական և ուսուցողական ուղվածությունը,
- ուսուցման տեխնոլոգիայի մասնաբաժնի մեծացումը, որը ենթադրում է դպրոցականների ՝ էկոլոգիական ուղղվածությամբ ինքնուրույն աշխատանքների իրականացում [3 էջ 180]:

Էկոլոգիական դաստիարակության տեխնոլոգիաները

21-րդ դարի կրթական համակարգում անհրաժեշտություն է դարձել նորարարական տեխնոլոգիաների ներդրումը: Ներկայումս կարևորվում է կրթական համակարգի բոլոր մակարդակներում՝ էկոլոգիական կրթության իրականացումը նոր ձևրով: Էկոլոգիական կրթությունը և դաստիարակությունը ավելի արդյունավետ կիրականանա, եթե այն ունենան ինտեգրված մոտեցում, և ոչ թե առարկայական մեկուսացում: Էկոգիական գիտելիքների պրակտիկ կիրառման խնդիրը բավականին բարդ է:

Տեսական նյութի յուրացման համար խիստ կարևորվում է ուսուցման մեթոդների միջոցների ձևերի և տեխնոլոգիաների արդյունավետ համադրումը:

Ըստ Դ.Բ Էլկոնինի և Վ.Վ Դավիդովի կողմից հեղինակված զարգացնող ուսուցման տեխնոլոգիայի՝ կարևոր են այն տեսական գիտելիքները, որոնք դուս են հուզական պատկերացումների սահմաններից և հենվում են մտածական գործընթացների զարգացման վրա և ավելի վերացական են:

Դ.Բ. Էլկոնինի, Վ.Վ.Դավիդովի զարգացնող ուսուցման տեխնոլոգիայում սովորողների տեսական մտածողության զարգացման գործընթացի վերաբերյալ ներկայացված են որոշակի դրույթներ `

- բովանդակային վերլուծություն՝ բնական օբյեկտներին, երևույթներին բնորոշ ընդհանուր հատկանիշների բացահայտում՝ ժառանգականության մակարդակում,
- բովանդակային վերացարկում՝ տվյալ ուսումնական նյութում ելակետային համարվող ընդհանուրի առանձնացում արտահայտված նշանների, խորհրդանիշների ձևով,
- բովանդակային ընդհանրացում՝ ամբողջի վերլուծություն՝ բացահայտելու համար նրա ներքին միասնությունը, ծագման ընդհանրությունը,
- Վերացականից կոնկրետի անցումը՝ բովանդակային ընդհանրացման շնորհիվ:
- Բովանդակային անրադարձ՝ սեփական մտածական գործունեությանը նպաստող իրական հիմքերի որոնում [4 էջ 69**]:**

Էկոլոգիական կրթությունը և դաստիարակությունը տարրական դպրոցում ցանկալի է կազմակերպել նախագծային ուսուցման տեխնոլոգիայով: Նախագծային տեխնոլոգիան օգնում է սովորողներին ձեռք բերել նոր գիտելիքներ, ձևավորում է առանձնահատուկ կարողություններ և հմտություններ՝ զանազան իրավիճակներում կողմնորոշվելու և հետազոտական աշխատանքներ կազմակերպելու համար:

Էկոլոգիական կրթության և դաստիարակության ընթացքում կիրառվող նախագծային տեխնոլոգիան հնարավորություն է տալիս իրականացնելու անհատական և խմբային ուսուցում, առանցքային թեմաների դասավանդումը գիտական հետազոտությունների և տեխնոլոգիական նորարարությունների հիման վրա: Էկոլոգիական թեմաների ուսուցումը ժամանակակից տեխնոլոգիաների կիրառմամբ պայմանավորված է նաև՝ կրթության ոլորտում ՀՀ պետական օրենսդրական փաստաթղթերի պահանջներով: Էկոլոգիական շարունակական կրթության համակարգը Հայաստանի Հանրապետության միասնական կրթական համակարգի բաղադրամասն է և ընդգրկում է կրթական տարբեր մակարդակներ: Կրթական բոլոր մակարդակներում այն իրականացնելու համար անհրաժեշտ է կիրառել նոր ռազմավարություն և մեթոդներ:

Նախագծային տեխնոլոգիան մանկավարժության ժամանակակից տեխնոլոգիաներից է: «Նախագիծ» եզրույթը լայն իմաստով հասկացվում է որպես ինչ-որ մտահաղացում, պլանավորում: Այս տեխնոլոգիան ներկայացվել է փիլիսոփա և մանկավարժ Ջոն Դյուիև նրա աշակերտ Վ.Խ.Կիլպատրիկի կողմից, որոնք հանդիսանում էին մանկավարժության և փիլիսոփայության մեջ հումանիտար գաղափարների կրող:

Նախագծային ուսուցման տեխնոլոգիան կրթական գործընթացում հիմնարար և նորարար է համարվում: Ուսուցման գործընթացում նախագծային տեխնոլոգիան համարվում է ինտերակտիվ, որը նպաստում է սովորողների ինքնուրույն գիտելիքների ձեռք բերմանը, ձևավորում է առանձնահատուկ կարողություններ և հմտություններ՝ տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու և հետազոտական աշխատանքներ կազմակերպելու համար, ինչպես նաև գտնելու ոչ ստանդարտ լուծումներ՝ քննադատական մտածողություն ձևավորելու համար:

Նախագծային տեխնոլոգիայի կիրառումը կօգնի անհատական և խմբային ուսուցման կազմակեպմանը՝ հիմնված պրակտիկ գործունեության վրա:
Էկոլոգիական կրթության և դաստիարակության գորրծընթացի իրականացման ընթացքում, նախագծային ուսուցման տեխնոլոգիայի կիրառումը ենթադրում է ուսուցման նախագծերի, մեթոդների, ուսուցման տարբեր միջոցների և ձևերի կիրառում, ինտեգրված գիտելիքների, տեխնիկական և տեխնոլոգիական նախագծային կարողությունների հիմավորված հարաբերակցում:

Ցանկացած տիպի նախագծային աշխատանք իր մեջ ներառում է 4 հիմնական փուլ՝

1. **Նախապատրաստական փուլ.**

- նախագծի նպատակի և թեմայի որշում,
- հիմնախնդրի սահմանում, հետազոտական հարցերի ձևակերպում,
- իրականացվող նախագծին մասնակցողների քանակի որոշում
- աշխատանքային խմբերի կազմում:

2. **Պլանավորման փուլ.**

- ինֆորմացիայի սկզբնաղբյուրի որոշում,
- ինֆորմացիայի խմբավորման և բացատրման եղանակների սահմանում,
- սպասվելիք արդյունքի նախագծում՝ բանավոր, գրավոր զեկուցում ցուցադրական նյութերի միջոցով,
- աշխատանքների ամփոփում, գնահատման ընթացակարգի ու չափանիշների սահմանում,
- աշխատանքային հանձնառության բաշխում:

3. **Կազմակերպչական – հետազոտական փուլ**.

- ինֆորմացիայի խմբավորում, խնդիրների վերլուծություն,
- հետազոտական, որոնողական աշխատանքների՝ դիտում, սկզբնաղբյուրի ուսումնասիրում, էքսկուրսիաների նախագծում և այլն,
- խմբերի ինքնուրույն աշխատանքների կազմակերպում և իրականացում:

4. **Արդյունքների ներկայացման փուլ.**

- իրականացված աշխատանքների ներկայացում և վերլուծություն,
- եզրակացությունների սահմանում և ստացված արդյունքների ամփոփում,

1.4.Դպրոցականների էկոլոգիական կրթության և դաստիարակության միջոցներն ու ձևերը

Էկոլոգիական կրթությունը մեծամասամբ կապված է ուսուցման գործընթացի հետ, իսկ էկոլոգիական դաստիարակությունը իրականացվում է բացառապես արտադասարանային գործնական աշխատանքների միջոցով, ուղղված ներազդելու նրանց զգացմունքային հուզական աշխարհի վրա և նպաստում մարդասիրական արժեքային աշխարհընկալման ձևավորմանը: Արտաուսումնական աշխատանքները դիտվում է որպես դասից դուրս իրականացվող գործունեություն, սովորողների համար ոչ պարտադիր և կառուցվում է նրանց հետաքրքրությունների և ինքնագործունեության հիման վրա: Արտաուսումնական աշխատանքների բովանդակությունը կազմելիս ուսուցիչը հաշվի է առնում այնպիսի սկզբունքներ ինչպիսիք են՝ կապը կյանքի հետ, կապը առարկայի ծրագրային նյութի հետ, արտաուսումնական աշխատանքի բովանդակությունը համապատասխանեցնում է սովորողների հետաքրքրություններին, տարիքին, անհատական պահանջմունքներին և մտավոր զարգացման յուրահատկություններին:

Էկոլոգիական կրթության և դաստիարակության արդյունավետ ձևերից մեկը, մասսայական էկոլոգիական միջոցառումների կազմակերպումն ու անցկացումն է՝ թռչունների, անտառների, ծաղիկների, կանաչ տեղանքների պաշտպանության կազմակերպմամբ: Ուշադրության է արժանի նաև բնության պահպանության և հարստացման վերաբերյալ զանգվածային միջոցառումները՝ «Թռչնի օր», «Բննությունը մեր բոլորի տունն է», «Ծաղկի տոն», «Ոսկե աշուն», «Բերքի տոն», բնության պահպանության, վերարտադրման թեմաներով լուսանկարների, մրցույթներ և այլն [11,էջ 65] : Տարատեսակ զանգվածային միջոցառումների կազմակերպումը, թեկուզև կարճատև մեծ դեր և նշանակություն ունի էկոլոգիական կրթության և դաստիարակության կազմակերպման գործում նամանավանդ, երբ սովորողները ներգրավվում են որպես ակտիվ մասնակիցներ և ստեղծագործողներ, իրենց աշխատանքները ներդնելով ընդհանուր աշխատանքների մեջ:

Դպրոցականների հետ կազմակերպվող էկոլոգիական աշխատանքներում պահանջվում է կազմակերպչական ձևերի մեթոդների և բովանդակության շարունակական բարելավում:

Էկոլոգիական կրթության և դաստիարակության ընթացքում սովորողների գործնական կարողութունների և հմտությունների ձևավորում իրականանում է հիմնականում գործունեության այնպիսի ձևերի իրականացման ժամանակ, ինչպիսիք են հետազոտական, նախագծային, գործնական և ինքնուրույն աշխատանքները, որոնք իրականացվում են ուսուցման գործնական աշխատանքների բնապահպանական և վերարտադրողական միջոցներով:

Գործնական աշխատանքները կարող են ներկայացվել որպես գործունեություն, որն ուղղված է տեսական գիտելիքների զարգացմանը, խորացմանը և ամրապնդմանը: Շրջակա միջավայրի պահպանման և ուսումնասիման ուղղությամբ սովորողների գործունեության կազմակերպման յուրահատուկ ձև կարող են լինել խաղային և իրական ուսուցանող իրադրությունները:

Էկոլոգիական դաստիարակության գործընթացում արդյունավետ են համագործակցային, կոլեկտիվ, խմբային աշխատանքի, ինչպես նաև խաղային աշխատանքի ձևերը: Էկոլոգիական բովանդակությամբ խմբային աշխատանքը, ուսումնահետազոտական նախագծերը նպաստում են միջանձնային հարաբերությունների ձևավորմանը, սեփական դիրքորոշման հստակեցմանը,

Աղյուսակ 1. Էկոլոգիական դաստիարակության միջոցների և ձևերի մոդել

Տեսակները	Միջոցները	Ձևերը
Ուսումնաճանաչողական գործունեություն՝ Դասեր, Խմբակներ, Առարկայական խմբակներ:	Էկոլոգիական դաստիարակչական աշխատանքների պլանավորում, Էկոլոգիական ուսումնական մրցույթներ	Էկոլոգիական դաստիարակչական աշխատանքներ, ներդպրոցական էկոլոգիական միջոցառումներ:
Իմացական գործունեություն	Բնապահպանական աշխատանքներ Բնության վերականգման կարճաժամկետ ծրագրեր(ծառատունկ շաբաթօրյակներ)	Բնապահպանական գիտելիքներ պրակտիկ գործունեություն, զրույցներ, խաղեր:
Էկոճանաչողական գործունեություն	Համագործակցություն բնապահպանական կազմակերպությունների հետ	Էքսկուրսիայի կազմակերպում, Էկոլոգիական բովանդակությամբ համադպրոցական տոնի կազմակերպում, շաբաթօրյակի կազմակերպում:
Բնապահպանական գործունեություն	Ինֆորմացիոն-տեղեկատվական գործունեություն	Դպրոցական էկոլոգիական ծրագրերի կազմում և իրականացում:
Բնության խնամքի և վերականգման գործունեություն	Շաբաթօրյակներ, <<ՄԱՔՈՒՐ ԲՆՈՒԹՅՈՒՆ>> ակցիայի կազմակերպում	Ծառատունկ, աղբամաքրման աշխատանքներ:

Դպրոցականների էկոլոգիական կրթության և դաստիարակության խնդիրները արդյունավետ լուծելու համար կարևոր նշանակություն են ձեռք բերում՝ միջավայրի էկոլոգիական որակը, բնական պաշարները և նրանցից պատրաստված իրերը, կրտսեր դպրոցականների մոտ շրջապատող միջավայրի հանդեպ արժեքային վերաբերմունքի ձևավորումը:

Դպրոցում սովորողի էկոլոգիական կրթության և դաստիարակության արդյունավետ և նպատակային զարգացման համար կարևոր պայման է այդ գործընթացին համալիր մոտեցում ցուցաբերելը: Համալիր մոտեցման հիմքում ուսումնական և դաստիարակչական աշխատանքների օրգանական միացությունն է, կազմակերպման ձևերի և մեթոդներիփոխներգործությունը, որն իրագործվում է սովորողների ուսումնական և արտաուսումնական գործունեության ընթացքում:

ԳԼՈՒԽ 2

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

2.1 Հետազոտական աշխատանքի կազմակերպումը և ստացված արդյունքների վերլուծությունն ու ամփոփումը

Հետազոտական աշխատանքի խնդիրների լուծման նպատակով՝ իրականացրել ենք հետազոտական ուսումնասիրություններ:

Որպեսզի լուծենք մեր առջև դրված խնդիրները ու նպատակները՝ նախ և առաջ հարցաթեթիկի միջոցով պարզել ենք, թե դպրոցականները բնապահպանական ի՞նչ գիտելիքների, կարողությունների և հմտությունների են տիրապետում, այնուհետև հարցաթերթիկի միջոցով պարզել ենք, թե տարբեր դպրոցների տարրական դասարաններում դասավանդող ուսուցիչները էկոլոգիական դաստիարակության գործընթացը կազմակերպելու ընթացքում ինչ խնդիրների են բախվում:

Դպրոցականների էկոլոգիական գիտելիքների և դաստիարակության մակարդակի բացահայտման վերաբերյալ հաստատուն տվյալներ ունենալու նպատակով մենք կիրառել ենք հետազոտության հետևյալ մեթոդները՝

- Հիմնախնդրի հետ կապված գիտամանկավարժական գրականության ուսումնասիրություն
- Հարցաթերթիկային հարցման մեթոդ
- Հետազոտությունների արդյունքների ներկայացման մաթեմատիկական մեթոդ:

Դպրոցականների շրջանում իրականացրած հարցաթերթիկների հարցաշարը ուղղված է նրանց էկոլոգիական և բնապահպանական գիտելիքների, կարողությունների և հմտությունների բացահայտմանը:

Հարցաշարը կազմված է 7 հարցից:



Սիրո՞ւմ եք բնությունը հարցին հարցմանը մասնակցած 77 աշակերտների ճնշող մեծամասնությունը պատասխանել է <<Այո>>, ինչը փաստում է, որ կրտսեր դպրոցականների մոտ իրենց շրջապատող միջավայրի նկատմամբ սերը և հոգատարությունը մեծ է: Նրանք արտահայտված դրական վերաբերմունք ունեն շրջակա միջավայրի նկատմամբ, ինչը գոհացնող հանգամանք է:



Ի՞նչ եք հասկանում բնություն ասելով հարցին տրված պատասխանները փաստում են. դպրոցականները, գիտեն բնությունը մարդուն շրջապատող միջավայրն է, բույսերի ու կենդանիների ամբողջությունը: Պատասխանները գոհացնող է:



Հարցմանը մասնակցած կրտսեր դպրոցականների պատասխանները ցույց տվեցին, որ նրանք գիտեն, թե ինչպես պետք է բնությունը պահպանել, ծանոթ են բնապահպանական միջոցառումներին և ծրագրերին, ինչը մեզ շատ ուրախացրեց:



Դպրոցականների մեծ մասը տեղյակ է, որ մեքենաների ծուխըբացասական ազդեցություն է ունենում բույսերի աճի և զարգացման վրա, սակայն հարցմանը մասնակցած աշակերտների 5% պատասխանել է, որ մեքենաների ծուխը ոչ մի վտանգավոր հետևանք չի ունենա բույսերի աճի վրա, այս հանգամանքը անհագստանալու առիթ է տալիս:

5 . Ի՞նչ եք կարծում, զանգվածային ծառահատումները, ինչպիսի հետևանքներ կարող են ունենալ.

77 պատասխան



Հարցմանը մասնակցած աշակերտների պատասխանները, ցույց են տալիս, որ երեխաների մեծ մասը գիտի ինչպիսի բացասական հետևանքներ և ազդեցություններ կարող են ունենալ զանգվածային ծառահատումները բնության և շրջակա միջավայրի վրա:

6.Թուղթը խնայողաբա՞ր եք օգտագործում.

77 պատասխան



Հատկապես գոհացնող է այն հանգամանքը, որ աշակերտների գերակշռող մասը դրական պատասխան է տվել, սակայն մտահոգիչ է, որ կան երեխաներ ովքեր այս մասին մտածում են, բայց իրենց վարքագծում ուշադրություն չեն դարձնում այդ հանգամանքին:

7. Եթե ձեր խնամքի տակ լինի փոքրիկ, կանաչապատ տարածք՝ այգի, ինչպե՞ս կվարվեք.
77 պատասխան

Մեր տրված հարցին. եթե ձեր խնամքի տակ լինի փոքրիկ, կանաչապատ տարածք՝ այգի, ինչպե՞ս կվարվեք. Հարցմանը մասնացած երեխաների ճնշող մեծամասնության պատասխանը թույլ է տալիս ենթադրել, որ նրանք դրական և հոգատար վերաբերունք ունեն բնության նկատմամբ, քաջ գիտակցում են, որ բնությանն անհրաժեշտ է սեր և հոգատարություն, սակայն հարցմանը մասնակցածների 2,6% (2 հոգի) պատասխանել էր որ կկտրի ծառերը և իր համար խաղահրապարակ կդարձնի սա անհանգստացնող հանգամանք է, կարծում ենք, որոշակի պրակտիկ գործունեությունը բնության գրկում, կնպաստի էկոլոգիական գիտակցության բարձրացմանը և բնության նկատմամբ սպառողական վերաբերմունքի նվազեցմանը :

Այսպիսով՝ հարցմանը մասնակցել են 37 աշակերտ դասարանների : Հարցաթերթիկը կազմվել էր այնպես, որ սովորողները հնարավորություն ունենային ներկայացնելու նաև իրենց տեսակետը: Ընդհանրացնելով հարցումների արդյունքները եկանք հետևյալ եզրակացության. տվյալներից երևում է, որ կրտսեր դպրոցականների մոտ իրենց շրջապատող միջավայրի մասին գիտելիքների մակարդակը համեմատաբար բարձր է, նրանք ունեն արտահայտված դրական վերաբերմունք շրջակա միջավայրի՝ բնության նկատմամբ, նրանք իրենց համարում են բնության մի մասնիկը և իրենց գործունեության ընթացքում փորձում են չվնասել բնությանը:

Հարցումներից ստացված տվյալները գոհացնող են, սակայն միաժամանակ երևաց, որ երեխաների էկոլոգիական դաստիարակության գործընթացում անելիքներ դեռևս շատ կան:

Հետազոտական աշխատանքների ընթացքում իրականացրել ենք հարցումներ դասավանդող ուսուցիչների շրջանակներում: Մեր նպատակն էր պարզել, թե ի՞նչ դժվարությունների են հանդիպել էկոլոգիական դաստիարակության, էկոլոգիական գիտակցության ձևավորման գործընթացում նրանք:

Հարցումներին մասնակցել են դասավանդող 32 ուսուցիչ: Ներկայացնում ենք հարցաթերթիկների վերլուծությունը.

1. Ինչպիսի՞ն է այսօր սովորողների վերաբերմունքը դասավանդվող առարկաների և, առհասարակ, ուսուցման գործընթացի նկատմամբ.

32 պատասխան



- սիրում են սովորել,
- չեն սիրում սովորել,
- որոշակի չափով են հետաքրքրված:

Տրված հարցին ուսուցիչների ճնշող մեծամասնությունը պատասխանել է, որ սովորողները մասնակի հետաքրքրություն են ցուցաբերում ուսումնական գործընթացի նկատմամբ, ինչը տխրեցնող հանգամանք է:

2. Ինչպե՞ս են վերաբերվում սովորողները բնությանը.
32 պատասխան



Հարցման արդյունքում պարզ դարձավ, որ սովորողները դրական վերաբերմունք ունեն բնության նկատմամբ, սակայն չափազանց տխրեցնող է այն հանգամանքը, որ հարցաթերթիկի տրված պատասխաններում գերակշռում էր նաև արտահայտված սպառողական վերաբերմունքը և անտարբերությունը շրջակա միջավայրի նկատմամբ, կարծում ենք սա անհանգստացնող է և անհրաժեշտ է գտնել պատճառները:

3. Սովորողների էկոլոգիական գիտակցության մակարդակը պայմանավորված է.
32 պատասխան



Հարցման արդյունքում հավաքագրած տվյալները ցույց են տալիս, որ դպրոցականների էկոլոգիական գիտակցության ձևավորման գործընթացում կարևոր դեր ունեն դպրոցում ստացած գիտելիքները և իհարկե ծնողների համագործակցությունը: Կարող ենք ենթադրել, որ եթե այս երկու գործոնները փոխկապակցված կերպով աշխատեն, ապա կբարձրանա սովորողների էկոլոգիական գիտակցության մակարդակը:

4. Սովորողների մոտ էկոլոգիական գիտակցության ձևավորման համար կարևորում եք.
32 պատասխան

Հարցմանը մասնակցած ուսուցիչների մեծ մասը կարևորում է պրակտիկ էկոլոգիական դաստիարակությունը, և փաստում է, որ էկոլոգիական գիտակցության ձևավորման հիմքը հենց պրակտիկ գործունեությունն է: Կարծում ենք, որ դպրոցները որոնք չունեն հնարավորություններ, միջոցներ, սովորողների պրակտիկ էկոլոգիական գործունեությունը կազմակերպելու համար, պետք է փորձեն միջոցներ գտնել այդ բացը լրացնելու ուղղությամբ՝ կազմակերպել շաբաթօրյակներ, արշավներ բնության գիրկ, արտադպրոցական միջոցառումներ, էքսկուրսիաներ և այլն:

5. Հասարակության անտարբերությունն էկոլոգիական խնդիրների նկատմամբ ազդու՞մ է արդյոք սովորողների էկոլոգիական գիտակցության վրա.
32 պատասխան



դասավանդող ուսուցիչների մեծ մասը նշեց, որ հասարակության անտարբերությունը բացասական կերպով է անդրադառնում սովորողների էկոլոգիական դաստիարակության վրա:

7. Հետաքրքրու՞մ են սովորողներին այնպիսի առարկաները, որոնք դիտարկում են <<մարդ – բնություն հարաբերությունները>>.

32 պատասխան



Հարցման արդյունքում պարզեցինք, որ սովորողների հետաքրքրվածությունը բավականին բարձր է այնպիսի առարկաների նկատմամբ, որոնք դիտարկում են «մարդ – բնություն» փոխհարաբերությունները, անշուշտ այս հանգամանքը դրական ազդեցություն կունենա կրտսեր դպրոցականների էկոլոգիական դաստիարակության վրա:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«ԷԿՈԼՈԳԻԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՁԵՎԵՐԸ ՏԱՐՐԱԿԱՆ ԴՊՐՈՑՈՒՄ» թեմայի շուրջ մասնագիտական գրականության, իրականացրած հարցաթերթիկային հարցումների, միջոցառման և շաբաթօրյակի վերլուծության արդյունքները թույլ են տալիս մեզ հանգել հետևյալ եզրակացություններին.

1. Էկոլոգիական կրթության արդյունավետությունը հիմնականում կախված է ուսուցման գործընթացից, իսկ էկոլոգիական դաստիարակությունը իրագործվում է գործնական աշխատանքների, արտադասարանային միջոցառումների միջոցով, որի հիմնական նպատակն է ներազդել կրտսեր դպրոցականների էկոլոգիական գիտակցության ձևավորման վրա:

2. Հարցաթերթիկային հարցումների արդյունքները թույլ են տալիս եզրակացնել, որ դպրոցում դասավանդվող առարկաների շրջանակներում քիչ է ներառված էկոլոգիական դասատիարակության բաղադրիչը, բացակայում են անհրաժեշտ պայմանները, դպրոցամերձ հողամասը, որի պատճառով ուսուցիչները չեն կարողանում կազմակերպել պրակտիկ էկոլոգիական գործունեություն:

3. Առաջարկում ենք հատուկ ուշադրություն դարձնել սովորողների պրակտիկ, բնապահպանական ամենօրյա գործունեությանը, ինչի նպատակով դպրոցներում կամ համայնքներում կարելի է ստեղծել ուսումնահետազոտական լաբորատորիա, ուսումնահետազոտական հողամաս, որտեղ կրտսեր դպրոցականները կիրականացնեն փոքրիկ հետազոտություններ, կխնամեն բույսեր և կենդանիներ:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Ամիրջանյան Յու., Սահակյան Ա., Մանկավարժություն, Երևան, Մանկավարժ, 2005թ.,454 էջ:
2. Աջամօղլյան Ա. Գ., Էկոլոգիական հանրակրթության հիմնախնդիրները, Երևան ԵՊՀ, հրատարակչություն 2004 թ., 112 էջ:
3. Ասատրյան Լ.Թ, Էկոլոգիական կրթության կառավարման հիմունքներ, Երևան, Արտագերս 2009թ., 335 էջ:
4. Ասատրյան Լ.Թ Կարապետյան Ն.Զ., Ես և շրջակա աշխարհը ինտեգրված դասընթացի դասավանդման մեթոդիկա, Երևան Արտագերս 2016թ, 224 էջ:
5. Ասատրյան Լ.Թ, Սարգսյան. Փ.Ա., Նախադպրոցական և կրտսեր դպրոցական տարիքի էկոլոգիական կրթությունունու դաստիարակությունը <<Զանգակ 97>>, հրատ, 2002 թ., 95 էջ:
6. Ասատրյան Մ.Ա Էկոլոգիակ կրթության դերը ընդհանուր և մասնագիտական կրթության համակարգում, Մանկարավրժական մտքի հանդես 2002թ թիվ 1-7էջ:
7. Ավանեսյան Լ.Գ, Էկոլոգիական դաստիարակության նպատակները, խնդիրները ու սկզբունքները, Մանկավարժական մտքի հանդես թիվ 8 Երևան, 2001թ, էջ 60-64:
8. Բաղդասարյան Ա.Ա Բնապահպանական և բնօգտագործման կուլտուրայի ձևավորման միջոցները ու ձևերը հիմնական դպրոցում:, Ատեախոսություն Մանկ, գիտ , թեկ 2014թ;
9. Գևորգյան Ս. և ուրիշներ, Էկոլոգիական անվտանգության հիմնախնդիրները ՀՀ-ում, Երևան, Տնտեսագետ, 2014թ., էջ 17-18:
10. http://kantegh.asj-oa.am/437/1/234-237.pdf
11. http://fliphtml5.com/mmei/plme/basi